ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համայնքի ղեկավարի առաջարկությունը .

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31 հոդվածի 6-րդ կետի պահանջներով. ավագանին որոշում է՝

1.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին իրենց գբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար համայնքային ծառայողների աշխատակազմի քարտուղարի/ծածկագիր1.2/,գլխավոր մասնագետի/ծածկագիր 2,3/,առաջատար մասնագետի /ծածկագիր 3,1/ և առաջին կարգի մասնագետի/ծածկագիր 3,2/ նկատմամբ սահմանել հավելավճար իրենց պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով.

Կողմ -7 Դեմ -0 Չեզոքպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՖՈ
2. ԳԱՋԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՒՆԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՍՈՒՐԱՐ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՈՒՆԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 23

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին»»Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ավագանին որոշեց

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 9 նիստի օրակարգը՝

1.Համայնքի ղեկավարի վարձատրության չափի սահմանման մասին

2.Համայնապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին.

3. Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ոչ առեվտրային կազմակերպության/<<Ծիածան>> մսուր-մանկապարտեզ/ կառուցվածքները,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4.Համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

5.Համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական գումարի չափը սահմանելու մասին.

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՈՒԳՈՒՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԺ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 24

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 27-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ,համայնքի ավագանին որոշում է՝.

1.Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 262000(երկու հարյուր վաթսուն երկու հազար) ՀՀ դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱՉԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ /"ԾԻԱԾԱՆ" ՄՇՈՒՅԹ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ/ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

Աշխատակիցների թվաքանակը - 12

Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը/դրամ	հավելավճար
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	209600	
Համայնքի ղեկավարի խորհրդական	1	120000	
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար/1.2/	1	209600	10480
Աշխատակազմի գլխավոր մասնագետ/2.3/	1	208600	10430
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1/	1	179000	8950
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2/	1	171000	8550
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ/3.3/	1	120000	
	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ		
Վարորդ	1	145000	
Մշակույթի տան վարիչ	1	80000	
Գրադարանավարուհի	1	78000	
Հավաքարար	1	75000	
Աղբահանող բանվոր	1	109000	

2,Հաստատել "Ծիածան" մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը-10

Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ	
Մանկապարտեզի տնօրեն	1	124000
Մանկապարտեզի դաստիարակ	2	119050
Մանկապարտեզի հաշվապահ	1	78000
Մանկապարտեզի դաստիարակի օգնական	2	72800
Մանկապարտեզի խոհարար	1	72800
Մանկապարտեզի երգ երաժշտության ուսուցիչ	1	72800
Մանկապարտեզի օժանդակ բանվոր	1	72800
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Մանկապարտեզի պահակ	1	72800

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ

2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳՆԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 27-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի և "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով , Ավագանին որոշում է.

Սահմանել Նորամարգ համայնքի 2017 թվականի հետևյալ տեղական տուրքերը և վճարները

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 դրամ,
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,
բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների բանման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոռոգից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

1) Հգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 45000 դրամ.
զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 18000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ

5^1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 110000 դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.
ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

11. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքներում կարող են լինել 1.5, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի:

11.1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ Երևան քաղաքում՝ 7.0 գործակիցների կիրառմամբ:

11.2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժզ» կետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հ Հ դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հ Հ դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հ Հ դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 ՀՀդրամ:

Տեղական վճարներ

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցմա աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտվա շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցա ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ ------- 5000 դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելո հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքներ համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճա սահմանել՝

1) մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քմ. մակերեսի համար - 50 դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապվա ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ ---------- 1000 դրամ:

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանությա վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններո ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ---------10դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար -----1000 դրամ կամ

բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար --- 3000 դրամ

3).շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարմա մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ----------500 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՖՈ

2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ

6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 28-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջով ավագանին որոշում է.

1.Համայնքի մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի հաշվով 2017թվականի համար ծնողական գումարի ամսեկան վարձի չափը սահմանել `4000 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ